ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՌՈՒԲԵՆ ՇԱՐԲԱԹՅԱՆԻ ԵՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԵՐԳՉԱԽՄԲԻ
ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԻՑ ՀԵՏՈ

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐ ՌՈՒԲԵՆ ՇԱՐԲԱԹՅԱՆԻՆ

Հուլիսի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Տաճարի երգչախմբի գեղարվեստական ղեկավար և խմբավար Ռուբեն Շարբաթյանին շնորհեց Հայրապետական Օրհնության գիր՝ Գևորգյան Հոգևոր Ճեմարանում դասավանդման ընթացքում և Մայր Տաճարի երգչախմբի ղեկավարի պաշտոնում Հայոց Եկեղեցուն և Մայր Աթոռին բերած բազմամյա ծառայության համար:

Հավարտ Ս. Պատարագի Նորին Սրբությունը Վեհարանում ընդունեց մաեստրո Շարբաթյանին և Մայր Տաճարի երգչախմբին: Բացման խոսք ասաց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը: Այնուհետև իր խորին երախտագիտությունը հայտնեց մաեստրո Շարբաթյանը՝ Վեհափառ Հայրապետի գնահատանքն իր համար մեծ պատիվ համարելով և պարտավորվածություն հայտնելով այսուհետ առավել մեծ նվիրվածությամբ իր ծառայությունը բերել Հայ Եկեղեցուն: «Ջութակահարի գործիքը ջութակն է, դաշնակահարի գործիքը դաշնամուրն է, իսկ իմ գործիքը երգչախումբն է: Առանց երգչախմբի ես ոչինչ անել չեմ կարող: Հետևաբար այս գնահատանքը հասցեագրված է նաև երգչախմբի յուրաքանչյուր անդամի»,- ասաց իր խոսքում մաեստրոն:

Մայր Տաճարի երգչախմբի կողմից «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի կատարումից հետո ընթերցվեց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը: Կոնդակում ի մասնավորի ասվում է. «*Հարգարժան պրն Շարբաթյան, ուրախ ենք Հայրապետական Մեր գնահատանքի խոսքը հղել Ձեզ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ մշտապես դրսևորած Ձեր անկեղծ սիրո ու նվիրումի և մատուցած ծառայությունների համար: Էջմիածին քաղաքի մշակութային կյանքում բերած արդյունաշատ մասնակցությանը զուգընթաց Դուք երկար տարիներ երաժշտություն եք դասավանդում նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանում՝ Ձեր կարողությունները սիրով ներդնելով ի նպաստ ճեմարանականների կրթության: Մենք տեղյակ ենք, որ ճեմարանի սաները առանձնակի ակնածանք ու սեր են տածում Ձեր անձի հանդեպ՝ գնահատելով Ձեր եռանդուն աշխատանքը: Շուրջ մեկ տասնամյակ Դուք ղեկավարում եք նաև Մայր Տաճարի երգչախումբը, որն ապահովում է սրբազան արարողությունների պատշաճ ու վայելուչ կատարումը՝ գոհունակություն պարգևելով հավատացյալ Մեր զավակներին*»:

Վերջում օրհնության խոսք ասաց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց տիար Շարբաթյանին նրա արդյունաշատ աշխատանքի ու ծառայության համար՝ հատկապես կարևորելով այն մեծ դերը, որ երգչախումբն իր կատարումներով ունի եկեղեցում՝ ընդգծով, որ ի տարբերություն բեմահարթակներում հնչող երգեցողության՝ եկեղեցում երգեցողությունն աղոթք է. «*Մայր Տաճարն Աստծո բնակավայր է, Աստծո տուն է, և այնտեղ ձեր երգեցողությամբ դուք պաշտամունք եք մատուցում Աստծուն, և ձեր այդ ծառայությունը պետք է լինի ձեր կարողությունների և ձեր հոգու լավագույնը*»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ